



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր**

Երևան, Բաղրամյան 19, 333 սենյակ, հեռախոս (10) 51-33-58

«21 Ե հունվարի 2013թ.

N 030-Ե-10

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Աբրահամյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրություն 75-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգը ՀՀ օրենքի 47-րդ և 50-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Նախագծին կից ներկայացվում են օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը, նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության և գործող օրենքի փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքները:

Խնդրում եմ ներկայացված օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

Է. ՄԱՐՈՒՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ (այսուհետ՝ Օրենսգիրք) հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «վարչական ակտը բառերից հետո լրացնել «վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասում «միայն նյութական իրավունքի խախտման հիմքով բառերը փոխարինել «նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հիմքով բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

1.1. Իրավական ակտի անհրաժեշտությունը. Սույն իրավական ակտի ընդունումը պայմանավորված է ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն ու 141-րդ հոդվածի 1-ին մասը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

1.2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: 19-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Սահմանադրության այս երկու հոդվածները հանդիսանում են անձի՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացման երաշխիքներ: Այնուամենայնիվ, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը նախատեսելով այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու հնարավորություն, չի նախատեսում վարչական մարմնի գործողությունը և անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հնարավորություն, և այդ մասով, համաձայն ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 22-ի ՄԴՈ-942 որոշման, 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը ճանաչվել է Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Նույն կերպ 2011 թվականի փետրվարի 08-ի ՄԴՈ-936 որոշմամբ Սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր է ճանաչել օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասը՝ այն մասով, որով արգելափակվում է անձի իրավունքը՝ դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով բողոքարկելու նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտը:

1.3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Սույն նախագծով առաջարկվում է նախատեսել վարչական դատարանի վարչական մարմնի գործողությունը և անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու հնարավորություն, ինչպես նաև անձի՝ նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական

դատարանի դատական ակտի բողոքարկման հնարավորություն թե՛ նյութական, թե՛ դատավարական իրավունքի խախտման հիմքով:

2. Կարգավորման առարկան. Օրինագծի կարգավորման առարկան են անձի դատական պաշտպանության իրավունքի հետ կապված իրավահարաբերությունները:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Սույն նախագծի ընդունման արդյունքում ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն ու 141-րդ հոդվածի 1-ին մասը կհամապատասխանեն ՀՀ Սահմանադրությանը:

«Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքում
փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

**նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության
բացակայության մասին**

«Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊԻՐՔ

Հոդված 114. Գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակները

1. Վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում՝
 - 1) վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին.
 - 2) վարչական մարմինն այն վարչական ակտն ընդունելուն պարտավորեցնելու մասին, որի ընդունումը վարչական մարմինը մերժել է կամ չի ընդունել.
 - 3) դատավարության մասնակիցներին և այլ անձանց որոշակի գործողություններ կատարելուն կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու մասին.
 - 4) իրավահարաբերությունների առկայության կամ բացակայության կամ վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն առ ոչինչ լինելու մասին.
 - 5) այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու մասին.
 - 6) նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին.
 - 7) ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ իրավաչափ ճանաչելու մասին:
2. Սույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված դեպքերում, երբ քննվել է վարչական մարմինների միջև իրավասության վերաբերյալ վեճ, վարչական դատարանի դատական ակտը պետք է պարունակի նաև նշում այն մասին, թե տվյալ հարցով որ վարչական մարմինն է իրավասու:
3. Այն դեպքում, երբ վարչական մարմինը իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, դատարանը ստուգում է նաև, թե արդյոք վարչական ակտն ընդունելը կամ այն ընդունելը մերժելը, գործողությունը կատարելը կամ անգործություն դրսևորելը իրականացվել են օրենսդրությանը համապատասխան: Երբ վարչական մարմինը իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, և վարչական դատարանը հանգում է այն հետևության, որ վարչական մարմինը հայեցողական լիազորություններն իրականացրել է օրենսդրությանը ոչ համապատասխան, ապա վճռի եզրափակիչ մասը սահմանում է իրավասու վարչական մարմնի պարտականությունը՝ վարչական ակտ ընդունել կամ կատարել գործողություն՝ հիմք ընդունելով դատարանի իրավական դիրքորոշումը:

Հոդված 141. Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման հիմքը

1. Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարան, իսկ վերաքննիչ դատարանի դատական ակտերը՝ վճռաբեկ դատարան, միայն նյութական իրավունքի խախտման հիմքով:
2. Վերադաս դատարանը նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ գործերով փոփոխում է ստորադաս դատարանի դատական ակտը կամ մերժում բողոքը: